6. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: *ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:*

Մասնաճյուղն իր գիտահետազոտական և նորարարական գործունեության ակտիվացման համար պլանավորել է ընդլայնել դասախոսական կազմի և ուսանողների ներգրավումը հետազոտական աշխատանքներում, նպաստել ակադեմիական համագործակցության ընդլայմանը և հետազոտական աշխատանքների միջազգայնացմանը, նախաձեռնել տարածաշրջանի ձեռնարկությունների կարիքներին համապատասխան և նրանց մասնակցությամբ հետազոտական և կրթական ծրագրեր (ՌԾ, Նպատակ 2):

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

Հետազոտական ոլորտում մասնաճյուղի հետաքրքրություններն ու հավակնություններն ամրագրված են ԵՊՀ ԻՄ Գիտական խորհրդի 2016թ. փետրվարի 19-ի թիվ 14 նիստում ընդունված «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի զարգացման ռազմավարական ծրագիր (2016-2016թթ.)» փաստաթղթում: Համաձայն դրա ԵՊՀ ԻՄ-ն ձգտում է դառնալու այնպիսի հաստատություն, որը՝

- ուսանողներին առաջարկում է համակողմանի գիտելիք, կարողություններ և հմտություններ ապահովող կրթական ծրագրեր՝ **խարսխված հետազոտության, ստեղծագործ աշխատանքի ու նորարարության** վրա և համահունչ Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի հիմնարար սկզբունքներին,
- ուսանողներին և աշխատողներին տրամադրում է բարձրորակ կրթություն և հետազոտություններ իրականացնելու համար անհրաժեշտ ժամանակակից ենթակառուցվածքներ և բարենպաստ միջավայր:

Գիտության և նորարարության ոլորտում ռազմավարական իր նպատակի իրականացման համար կրթօջախն իր գործունեությունը նպատակաուղղել է հետևյալ խնդրիրների լուծմանը.

- մեծացնել հետազոտությունների ծավալը և ընդլայնել հետազոտական նախագծերում դասախոսական կազմի և սովորողների ներգրավվածությունը,
- զարգացնել հետազոտական համագործակցությունը հանրապետության գիտահետազոտական ինստիտուտների, բուհերի և ձեռնարկությունների հետ,
- խթանել մասնաճյուղի հետազոտական գործունեության միջազգայնացումը:

Մասնաճյուղում դասախոսական կազմի հետազոտական, մեթոդական ու փորձագիտական աշխատանքները կազմակերպվում և իրականացվում են մասնագիտական ամբիոններում, կարգավորվում ըստ ամբիոնների կանոնադրությունների (հաստատվել են ԵՊՀ ԻՄ-ի ԳԽ, 27.01.2017թ., **կետ 5, էջ 2**): Պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների համատեղ գիտահետազոտական աշխատանքները կազմակերպվում և իրականացվում են ըստ «ԵՊՀ ԻՄ ուսանողների պրակտիկայի կազմակերպման և անցկացման կարգ (26.05.2018 թ.)»-ի, ինչպես նաև «Երևանի պետական համալսարանում բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգ (14.02.2018 թ.)»-ի և «Բակալավրի կրթական ծրագրով ավարտական աշխատանքների գրախոսման կարգ (28.02.2012 թ.)»-ի:

ԵՊՀ ԻՄ-ն խրախուսում և **համակարգում է** ուսանողների և աշխատակիցների գիտահետազոտական գործունեությունը.

- ԵՊՀ ԻՄ-ի գիտական քարտուղարը և գիտակազմակերպական աշխատանքների համակարգողը համակարգում են Բուհի հետազոտական գործունեությունը,

- 2017թ.–ի սեպտեմբերից ՈՒԳԸ-ին կցվել է համակարգող,
- 11.02.2017թ. (թիվ 22) հաստատվել է ԵՊՀ ԻՄ ուսանողական գիտական ընկերության գիտաժողովների կազմակերպման կանոնակարգը,
- 28.10.2017թ. (թիվ 27) հաստատվել է ԵՊՀ ԻՄ ուսանողական գիտական ընկերության վերամշակված կանոնադրությունը,
- 28.02.2018թ. հաստատվել է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կողմից կազմակերպվող գիտաժողովներին դրամական աջակցություն տրամադրելու կարգը,
- 28.12.2019թ. (թիվ 42) հաստատվել է ԵՊՀ ԻՄ-ի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգը,
- ԵՊՀ ԻՄ-ում հիմնական աշխատակիցների և ուսանողների կողմից կատարված գիտահետազոտական աշխատանքների մասին հաշվետվություններն ամփոփվում են ամբիոնների տարեկան հաշվետվություններում, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշներում (ԳԱՑ), մասնաճյուղի գործունեության հաշվետվություններում, մասնաճյուղի գործունեության վերաբերյալ տնօրենի հաշվետվություններում, մասնաճյուղի զարգացման ռազմավարական ծրագրի կատարման վերաբերյալ զեկույցներում, մասնաճյուղի ուստարվա գործունեություններում:

Կրթօջախն իր հետազոտական գործունեությամբ ձգտում է մասնաճյուղում պահպանել ԵՊՀ-ում տարիների ընթացքում ձևավորված հետազոտական դպրոցների ավանդույթները, ինչպես նաև նպաստել դրանց հետագա զարգացմանն ու, ըստ հնարավորության, սեփական հետազոտական դպրոցի ստեղծմանը:

Գիտահետազոտական աշխատանքների արդյունքները մասնագիտական լայն հասարակությանը ներկայացվում են առանձին հոդվածների, գիտական ժողովածուների, պարբերական-ների, գրքերի ու ինֆորմացիայի տարածման այլ միջոցների միջոցով, ներկայացվում ներբուհական, հանրապետական և միջազգային գիտահետազոտական միջոցառումներում. գիտաժողովներում, նստաշրջաններում, սեմինարներում:

Աղյուսակում ներկայացված վերջին երեք ուստարիների տվյալները ցույց են տալիս, որ ԵՊՀ ԻՄ-ի հիմնական դասախոսական կազմի գիտահետազոտական աշխատանքների հրատարակությունների՝ ցուցահանդեսների, դասագրքերի, հրատարակված հոդվածների, ուսումնական ձեռնարկների քանակները վերջին ուստարվա մեջ ավելացել է:

	Հրատարակություն	2016-2017	2017-2018	2018-2019	Ընդամենը
	Հոդված	50	36	47	**133**
	Մենագրություն	2	3	1	**6**
	Դասագիրք	0	0	5	**5**
	Ուսումնական ձեռնարկ	5	1	4	**10**
	Զեկուցումների թեզիսներ	1	11	0	**12**
	Ցուցահանդեսներ	34	3	44	**80**
Ընդամենը		**92**	**54**	**101**	**246**

Հետևյալ աղյուսակում ներկայացված տվյալներից կարելի է եզրակացնել, որ ԵՊՀ ԻՄ –ում նկատվում է առանց արտաքին գործընկերների համագործակցության կատարված հետազոտական աշխատանքների թվի աճ:

ԳԱՑ 2014-19, Ցուցանիշ 2.13, էջ 36	2016-2017	2017-2018	2018-2019
Ընդհանուր հրատարակությունների թիվը	92	54	101
Արտաքին գործընկերների հետ համատեղ	9	2	

հրատարակությունների թիվը			
Արտաքին գործընկերների հետ համատեղ հրատարակությունների հաշվեկշիռը (%)	**9.8%**	**3.7%**	**0%**

Մեկ դասախոսին ընկնող ուսումնամեթոդական հրատարակությունների թիվը վերջին 3 ուստարիների համար կազմում է **0.07, 0.04 և 0.11** (***ԳԱՅ 2014-19, ցուցանիշ 2.13, էջ 36***), իսկ մեկ դասախոսին ընկնող գիտական հրատարակությունների թիվը կազմում է **0.6, 0.54 և 0.61** (***ԳԱՅ 2014-19, ցուցանիշ 5.3, էջ 70***), ընդ որում այս թվերը պայմանավորված են միայն մասնաճյուղի հիմնական դասախոսական կազմի հրատարակությունների թվով և դրանք, ինչպես տեսնում ենք, կայուն են:

Վերջին տարիներին **ԵՊՀ ԻՄ-ում պարբերաբար կազմակերպվում են** հանրապետական գիտաժողովներ, որոնց ակտիվ մասնակցում են մեր ուսանողները և դասավանդողները:

2019թ. հոկտեմբերին մասնաճյուղի ՈՒԳԸ նախաձեռնությամբ տեղի է ունեցել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հիմնադրման 25-ամյակին նվիրված «Անկախության առաջնեկը» խորագրով հանրապետական ուսանողական գիտաժողովը, որին մասնակցել են 38 ուսանողներ ՀՀ տարբեր բուհերից և մասնաճյուղից: 2019թ. մայիսին մասնաճյուղում կայացել է Թումանյանի ծննդյան 150-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողով, 2018թ. մայիսին՝ «1918թ. Մայիսյան հերոսամարտերը և Հայաստանի առաջին հանրապետության արարման գործընթացը» խորագրով հանրապետական գիտաժողով՝ նվիրված Առաջին Հանրապետության հիմնադրման 100-ամյակին:

ԵՊՀ ԻՄ-ի ուսանողները մասնակցում են նաև ԵՊՀ-ի ՈՒԳԸ-ի կազմակերպած տարբեր միջոցառումներին, մասնավորապես ամենամյան միջազգային գիտաժողովներին:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում գիտահետազոտական հետաքրքրություններն ու հավակնություններն արտահայտված են 2016-2020 թթ. երկարաժամկետ ռազմավարական ծրագրում, համաձայն որի մշակվել են մասնաճյուղի զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման միջնաժամկետ և կարճաժամկետ պլանները:

Մասնաճյուղում հետազոտություններն իրականացվում են մասնագիտական ամբիոն-ներում: Յուրաքանչյուր ամբիոն իրականացնում է իր մասնագիտական ուղղվածությանը համապատասխան գիտահետազոտական աշխատանքներ (***Հավելված 6. Աղյուսակ 1***): Ամբիոնների միջնաժամկետ ռազմավարական ծրագրերը (օրինակ՝ «Հայոց պատմության և հասարակագիտու-թյան ամբիոնի 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագիր») կազմվում են մասնաճյուղի ընդհանուր ռազմավարական ծրագրի դրույթներից ելնելով: Ամեն մի ամբիոն կազմում է ամենամյա աշխատանքային պլան՝ նշելով գիտական կոնֆերանսների նախապատրաստման, ուսանողական գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման, գիտական բանավեճերի ու նոր լույս տեսած մասնագիտական գրականության շուրջ քննարկումների անցկացման մասին հստակ ժամանակացույց: Կատարված գիտական աշխատանքները ներկայացվում են ամբիոնների տարեվերջյան հաշվետվություններում և ամփոփվում ԵՊՀ ԻՄ տարեկան հաշվետվությունում (տես նաև հետևյալ հղումով):

Մասնաճյուղի յուրաքանչյուր դասախոս ուսումնական տարվա սկզբին կազմում է **անհատական աշխատանքային պլան**, ներկայացնում գիտական, գիտամանկավարժական և գիտամեթոդական հետազոտությունների, մասնագիտական աճի ապահովման, որակավորման բարձրացման ուղղությամբ իր կողմից պլանավորված աշխատանքները, իսկ ուստարվա ավարտին ներկայացնում կատարողականի վերաբերյալ համապատասխան հաշվետվություն: Առկա է

տեղացի ասպիրանտ (հայցորդ) դասավանդողների և ԵՊՀ-ից հրավիրված փորձառու դասավանդողների միջև արդյունավետ գիտական համագործակցություն: Չնայած այս ամենին՝ հետազոտական ոլորտում միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրերի իրականացման ուղղությամբ վերջին տարիներին որոշակի պասիվություն է նկատվել՝ կապված մասնաճյուղի գիտական հանդեսի ԲՈԿ-ի ցանկից դուրս մնալու հետ:

Դասախոսների և ուսանողների գիտական գործունեությանն աջակցում է մասնաճյուղի գրադարանը, որը պարբերաբար համալրվում է մասնագիտական անհրաժեշտ գրականությամբ (*ԳԱՅ 2014-2019, Յուցանիշ 4.4/էջ 60*):

Մասնաճյուղի ղեկավարության կողմից մշակվել և գործում են հետազոտական աշխատանքների խրախուսման մեխանիզմներ, մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմը ունի Մայր բուհի գիտահետազոտական լաբորատորիաներից օգտվելու և գիտական պարբերականներում իրենց հոդվածները տպագրելու հնարավորություն:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

Մասնաճյուղի հետազոտական աշխատանքների իրականացման քաղաքականությունն ու ընթացակարգերը բխում են ԵՊՀ (**27.11.2014թ.**) և ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կանոնադրություններից **(29.04.2015թ.)** և ամրագրված են նրանց կանոնակարգերում ու ծրագրային փաստաթղթերում (19.02.2016թ., ՌԾ, նպատակ 2, էջ 8): Դրանք միտված են ստեղծելու և զարգացնելու մասնաճյուղի գիտական ուղղությունները:

Գիտական ներուժի արդյունավետությունը բարձրացնելու և հետազոտության ոլորտում ծավալի աճ ապահովելու համար ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը ձգտում է բարելավել հետազոտական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ տարածքային և նյութատեխնիկական պայմանները, զարգացնել և արդիականացնել մասնաճյուղի ուսումնական և գիտական բազան: Դասախոսների գիտական գործունեությանն աջակցում է մասնաճյուղի «Ակունք» գիտական պարբերականը, որտեղ անվճար տպագրվում են աշխատակիցների հոդվածները: Մասնաճյուղում իրականացվում են անհրաժեշտ գործընթացներ «Ակունք» գիտական պարբերականի գործունեությունը ԲՈԿ-ի նոր պահանջներին համապատասխանեցնելու և մասնաճյուղի դասախոսների գիտական գործունեությունը խթանելու համար: 2016-2019թթ. ընթացքում «Ակունք» հանդեսում տպագրվել է 255 հոդված, որի 40%-ը բուհի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից: Ներկայացված թվերը մատնանշում են նաև գիտական հանդեսի բարձր վարկանիշի մասին:

Հեղինակներ	2016		2017		2018		2019		Ընդ.	
	Քանակ	%	Քանակ	%	Քանակ	%	Քանակ	%	Քան.	%
ԵՊՀ և ՀՀ այլ բուհերից հրավիրված դասախոսներ	7	15	9	12	24	21	2	9	42	16.5
Հիմնական դասախոսներ	15	31	18	25	19	17	7	32	59	23.1
Այլ հեղինակներ	26	54	45	63	70	62	13	59	154	60.4
Ընդամենը	48		72		113		22		255	

Մասնաճյուղը քայլեր է ձեռնարկում նաև դասախոսական կազմի գիտահետազոտական գործունեությունը խրախուսելու ուղղությամբ: Այդ նպատակով 2020թ. հունվարից մասնաճյուղի նախահաշվով նախատեսվել է 2 (երկու) միլիոն ՀՀ դրամ և ևս 1 (մեկ) միլիոն դրամ ներհամալսարանական հետազոտական ծրագրերի ֆինանսավորման համար: 2020թ.-ի փետրվարին ստեղծվել է **«Տավուշ» հետազոտական կենտրոնը** (ԳԽ, 22.02.2020, կետ 8, հրաման թիվ 1/10, 08.01.2020թ.), որը մասնաճյուղի դասախոսների հետազոտական գործունեության իրականացման նոր ասպարեզ

է բացում և նպատակ ունի համակարգել նրանց հետազոտական գործունեությունը, բարձրացնել արդյունավետությունը, նաև ծառայեցնել մարզի հնարավորությունների բացահայտմանը:

Հետազոտական աշխատանքների կատարմանը նպաստում է նաև մասնաճյուղում պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման **կրթագիտական ծրագրի** իրականացումը (ԳԽ, 11.02.2017թ.), որի համաձայն հրատարակած հոդվածի, մենագրության, դասագրքի, ուսումնական ձեռնարկի, միջազգային համաժողովում ունեցած զեկուցման, դոկտորական կամ թեկնածուական ատենախոսության պաշտպանության, հեղինակային իրավունքի արտոնագրի համար դասախոսները ստանում են համապատասխան կրեդիտներ:

Վերջին 5 տարիների ընթացքում մասնաճյուղի 5 դասախոսներ ստացել են գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, 18-ը՝ դոցենտի գիտական կոչում, 3-ին շնորհվել է դոկտորի գիտական աստիճա, 3-ը ստացել են պրոֆեսորի գիտական կոչում: Գիտական աստիճաններ և կոչումներ ստացած դասախոսներից **8-ը երիտասարդ դասախոսներ են**:

2016-2019թթ. ընթացքում մասնաճյուղի բավականին թվով դասախոսներ մասնագիտական արդյունավետ գործունեության և կրթությանը մատուցած ծառայության համար խրախուսվել են և ստացել 2.315.000 դրամ պարգևավճար (***Հավելված 6, աղյուսակ 4***):

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:

Հետազոտական գործունեության միջազգայնացումը մասնաճյուղի ռազմավարական խնդիրներից է և բուհը քայլեր է ձեռնարկում միջազգային գիտական ամսագրերում աշխատակիցների հրապարակումները խրախուսելու, արտասահմանյան գիտաժողովներին մասնաճյուղի աշխատողների մասնակցությանը օժանդակելու, միջազգային գիտաժողովներ կազմակերպելու, արտասահմանյան գործընկերների ձեռք բերմանը և համագործակցության ամրապնդմանն աջակցելու ուղղությամբ (***ՌԾ. Խնդիր 2.3 Խթանել մասնաճյուղի հետազոտական գործունեության միջազգայնացումը***): 2019թ. ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի թիվ 42 նիստի որոշմամբ մասնաճյուղում կգործի գիտահետազոտական աշխատանքների որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգը: Այս հանգամանքը կնպաստի մասնաճյուղում գիտահետազոտական աշխատանքների որակական և քանակական ցուցանիշների բարելավմանն ու արդյունքների միջազգայնացմանը:

2015-2019թթ. ընթացքում մասնաճյուղի դասախոսներն իրենց հետազոտական աշխատանքների մի մասը հրատարակել են ԱՊՀ երկրներում գրախոսվող մասնագիտական ամսագրերում և արտասահմանյան միջազգային գիտական հանդեսներում՝ հետևելով համապատասխան ամսագրում տպագրության ներկայացվող հոդվածների պատրաստման և ներկայացման սահմանված պահանջներին: Ինչպես դասախոսները, այնպես էլ ուսումնառողները զեկույցներով հանդես են եկել ԵՊՀ-ի, ՀՀ այլ բուհերի և գիտահետազոտական ինստիտուտների կողմից կազմակերպվող միջազգային գիտաժողովներին, մասնակցություն ցուցաբերել արտերկրում կայացած մի շարք միջազգային գիտաժողովների: Այս առումով մասնաճյուղն աջակցում է ուսումնառողներին և դասավանդողներին սպասվելիք միջազգային գիտաժողովների և միջազգային դրամաշնորհային ծրագրերի վերաբերյալ տրամադրելով անհարաժեշտ տեղեկատվություն: Աղյուսակում ներկայացված է ՀՀ-ում և արտերկրում կազմակերպված միջազգային գիտաժողովներին մասնաճյուղի դասավանդողների մասնակցությունը վերջին 5 տարիների համար.

Կազմակերպման վայրը	2015	2016	2017	2018	2019	Ընդ.
ՀՀ-ում կազմակերպված միջազգային գիտաժողովներ	3	4	-	-	1	**8**
Արտերկրում կազմակերպված միջազգային գիտաժողովներ	3	7	8	4	1	**23**

Հավելված 6-ում ներկայացված **աղյուսակներ 2-ը և 3-ը** ցույց են տալիս, որ դեռևս սահմանափակ է ԱՊՀ և օտարերկրյա գրախոսվող ամսագրերում ԵՊՀ ԻՄ դասախոսների հրապարակումների թիվը: 2015-2019թթ. այն կազմել է ընդհանուր հրատարակությունների թվի (286) **4.55% -ը**:

Մասնաճյուղի միջազգայնացման և արտասահմանյան բուհերի հետ համագործակցության ակտիվացման համար 2015թ. բուհում ստեղծվել է Միջազգային կապերի բաժինը, որը 2019թ. վերափոխվել և դարձել է Արտաքին կապերի բաժին: 2016 թ.-ից մասնաճյուղը համագործակցում, իսկ 2019թ. մայիսին պայմանագիր է կնքել Ռուսաստանի Դաշնության Գժելի պետական համալսարանի (ԳՊՀ) հետ՝ կրթական, հետազոտական մի շարք ուղղություններով: Համագործակցության շրջանակում 2019թ. փետրվարին ԵՊՀ ԻՄ-ի և ԳՊՀ-ի միջև «Զբոսաշրջությունը և մշակույթը երեկ, այսօր, վաղը» խորագրով տեղի է ունեցել երիտասարդ գիտնականների միջազգային գիտագործնական տեսակոնֆերանս, որի նյութերը հրատարակվել են 2019թ. հոկտեմբերին:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Ե. ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:	
Ուսումնառողների ո՞ր տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացներից:	**88.6%**
Դասավանդողների ո՞ր տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացներից:	**74%**
Գործատուների ո՞ր տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացներից:	**82.4%**

Մայր բուհի միակ մասնաճյուղը կարևորում է ուսումնական գործընթացների և հետազոտական գործունեության փոխկապակցումը (ՌԾ, Խնդիր 2): Դասընթացների բաշխումը կատարվում է համաձայն դասավանդող դասախոսների նեղ մասնագիտացման, հաշվի են առնվում նրանց հակումներն ու կարողությունները: Ուսանողների կուրսային և ավարտական աշխատանքների թեմաներն առաջադրվում են հիմնականում ամբիոնների գիտական ուղղվածությանը (***Հավելված 6, աղյուսակ 1***) և գիտական ղեկավարների հետազոտական աշխատանքների թեմատիկային համապատասխան: Մասնաճյուղի դասախոսներն իրենց գիտական աշխատանքների արդյունքները և փորձը ներառում են ԵՊՀ ԻՄ մասնագիտությունների կրթական ծրագրերում, պարբերաբար կատարում են դասընթացների բովանդակային փոփոխություններ, որոնք արտահայտվում են դասընթացների փաթեթներում (պորտֆոլիոներում):

Մասնաճյուղից բավարավածության 2018-19 ուստարվա հարցման շրջանակներում ուսումնասիրվել է նաև դասախոսների բավարարվածությունը գիտահետազոտական գործունեության մասնաճյուղի տված հնարավորություններից: Հարցմանը մասնակցած թվով **60** դասախոսների **87%-ը** դասախոսական աշխատանքի համար գիտական գործունեությունը բոլոր դեպքերում կարևորում և անհրաժեշտություն է համարում (**էջ 1,2**): Նրանց **77%-ը** զբաղվում է գիտական գործունեությամբ (**էջ 1**), և նրանց **60%-ը** նշել է, որ մասնաճյուղը նպաստում է իրենց գիտական գործունեությանը (**էջ 2**): Իսկ նրանց **74%-ը** փաստում է, որ իրենց ամբիոններում հետազոտական գործունեությունը և ուսումնական գործընթացը փոխկապակցված են (**էջ 4**):

Ամբիոնների կողմից կատարվող գիտահետազոտական աշխատանքները մեծապես նպաստում են ինչպես ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը, այնպես էլ ժամանակի նորարական փոփոխություններին պատշաճ արձագանքելու կարողությունների

մեծացման ու տարածաշրջանի հիմնախնդիրներին ուղղված առաջարկությունների մշակմանը: Հարցմանը մասնակցած դասախոսների **72%**-ը նշել է, որ իր **գիտական աշխատանքների արդյունքներն** ուսանողությանը մատչելի են դառնում իր դասախոսությունների միջոցով (**էջ 5,6**), և ընդ որում դա միակ ճանապարհը չէ. նրանք կարևորում են նաև պրակտիկաների, կուրսային և ավարտական աշխատանքների, ուսանողների հետ արտալսարանային աշխատանքների միջոցով նրանց գիտության նվաճումներին իրազեկելու և ներառելու ճանապարհը:

Ուսանողների գիտելիքների ամրապնդման և հետազոտական հմտությունների պրակտիկ կիրառման միջոցներից է նաև **մասնակցությունը** ուսանողական գիտական ընկերության և ուսանողական խորհրդի կողմից կազմակերպվող գիտաժողովներին, սեմինարներին, զեկուցումներին: 2017-2019թթ. ժամանակահատվածում մասնաճյուղի ուսանողների կողմից կարդացվել են շուրջ 23 ուսումնագիտական զեկույցներ: Դրանց պատրաստումը կատարվել է ամբիոնների խորհրդատվությամբ և աջակցությամբ: Ուսանողների լավագույն հետազոտական աշխատանքները տպագրվում են տարբեր գիտական հանդեսներում: Միայն 2020թ. առաջին 3 ամիսներին «Ակունք» գիտական հանդեսների ժողովածուում տպագրվել է ուսանողների 3 հոդվածներ և ռուսական «Вестник научных конференций» («Գիտական կոնֆերանսների բանբեր») ժողովածուում՝ 9 հոդվածներ:

Ուժեղ կողմեր (Strengths)	Հնարավորություններ (Opportunities)
1. Մասնաճյուղի առկայությունը՝ որպես տարածաշրջանային հետազոտական և կրթական կարևոր կենտրոն: 2. Ռազմավարական ծրագրում հետազոտությունն-ին և զարգացմանը վերաբերող նպատակի առկայությունը: 3. Գիտական հետազոտությունների ոլորտում բազմամյա փորձ կուտակած բարձրորակ պրոֆեսորադասախոսական անձնակազմ: 4. Ձևավորված հետազոտական միջավայր՝ երիտասարդ գիտնականների և ուսանողների պատշաճ ներգրավմամբ: 5. Ամբիոններում գիտահետազոտական գերակա ուղղությունների առկայությունը 6. «Ակունք» գիտական հանդեսի առկայությունը: 7. ԵՊՀ-ի գիտական հանդեսներում մասնաճյուղի աշխատակիցների գիտական հոդվածների տպագրումը: 8. Տարաբնույթ գիտական միջոցառումների կազմակերպումը: 9. Մասնաճյուղի ուսանողների և դասավանդողների ակտիվ մասնակցությունը տարածաշրջանային և հանրապետական ցուցահանդեսներին: 10. ՈՒԳԸ-ի ակտիվ գործունեությունը:	1. ԵՊՀ գիտահետազոտական լաբորատորիաներից օգտվելը: 2. Հանրապետական և միջազգային գիտաժողովներին մասնակցության ընդլայնումը և «Հետազոտական աշխատանքի կազմակերպման սկզբունքները» դասընթացի կազմակերպումը մասնաճյուղում: 3. ԵՊՀ միջազգային համագործակցության վարչության հետ համագործակցությունը: 4. Գիտատեղեկատվական ներհամալսարանական ցանցի կատարելագործում: 5. Հանրապետական և տարածաշրջանային հետազոտական ծրագրերում համալսարանի մասնակցության նախաձեռնում: 6. Արտաքին շահառուների, մասնավորապես պայմանագրերով ամրագրված խոշոր գործատուների և հասարակության հետ կապերի կատարելագործում:

Թույլ կողմեր (Weaknesses)	Վտանգներ (Threats)
1. Մասնաճյուղում գիտահետազոտական աշխատանքները համակարգող կառույցի բացակայությունը: 2. Գիտական և հետազոտական աշխատանքների, գիտաժողովներին մասնակցության, գիտական հոդվածների տպագրման ֆինանսական թույլ աջակցությունը:	1.Տարածաշրջանում գիտահետազոտական կազմակերպությունների և գիտահետազոտական պատվերների բացակա-

3. Պետական ֆինասնավորմամբ գիտական թեմաների բացակայությունը: 4. Գիտական հետազոտության համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի բացակայությունը: 5. Հետազոտական աշխատանքներում ուսանողների թույլ ներգրավվածությունը 6. Համալսարանի գիտական ներուժի ոչ բավարար ներգրավվածություն պետական պատվերով և նպատակային ֆինանսավորմամբ իրականացվող գիտական հետազոտություններում: 7. Բարձր վարկանիշով հանդեսներում տպագրված աշխատանքների քիչ քանակը: 8. Օտար լեզվի, մասնավորապես միջազգային գիտական լեզվի՝ անգլերենի տիրապետման անբավարար մակարդակը: 9. Փոխկապակցված գիտահետազոտական նախաձեռնություններ իրականացնելու նպատակով այլ համալսարանների հետ գործընկերային հարաբերությունների ցածր մակարդակը:	յությունը: 2. Համաշխարհային տեխնոլոգիական առաջընթացին ոչ համահունչ զարգացումը: